ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/09

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից 23.01.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/09 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 23.01.2018թ. բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի առարկան է հանդիսանում 2 200 000 հատ անասնաբուժական ստերիլ ասեղի ձեռքբերումը, իսկ նշված առարկայի ԱՏԳԱԱ դասակարգիչն է՝ 9018321000:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն առաջարկել է միավորի (1 հատ) համար 11 ՀՀ դրամ (պայմանագրի կատարման գումարը՝ 24 200 000 ՀՀ դրամ) և գինը առաջարկվել է առանց ԱԱՀ-ի՝ համաձայն՝ ՀՀ կառավարության 05.10.2017թ. 1317-Ն որոշման հավելված թիվ 3-ի, որի համաձայն 9018 ԱՍԳԱԱ դասակարգիչով բժշկական տեխնիկայի իրացումը ազատված է ԱԱՀ-ից:

Ըստ վերոհիշյալ որոշման՝ բժշկական տեխնիկա են համարվում՝ դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժշետ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորումը: Ընդ որում՝ Ընթացակարգի առարկան պատկանում է վերոհիշյալ «սարքերը և այլ սարքավորում դասին»:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով ընթացակարգին նույնպես մասնակցել է «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն, որը միավորի (1 հատ) համար առաջարկել է 12 ՀՀ դրամ (պայմանագրի կատարման գումարը՝ 26 400 000 ՀՀ դրամ, որից ԱԱՀ՝ 4 400 000 ՀՀ դրամ) և գինը առաջարկվել է ԱԱՀ-ով:

Հայտերի բացումը տեղի է ունեցել 29.12.2017թ. ժամը 12:00-ին, էլեկտրոնային տարբերակով՝ գնումների www.armeps.am համակարգի միջոցով:

18.01.2018թ. ժամը 21:06-ին info@armeps.am էլ.հասցեից Ընկերությունը ստացել է ծանուցում, որին կից ներկայացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը, որի համաձայն՝ «Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը գործընթացը մտնում է անգործության ժամկետի մեջ, որի ավարտից հետո մասնակցին սահմանված կարգով և ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ»:

Ընկերությունը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշումը, խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի ներկայացրած հայտը ճանաչել անբավարար և հաղթող ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.01.2018թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 29.01.2018թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/743-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված N 1-ի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը մասնակիցների գնային առաջարկների համեմատումը իրականացրել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ եթե ընտրված մասնակիցը հայտով ստանձնել է տվյալ ապրանքատեսակի մասով ՀՀ պետական բյուջե ԱԱՀ վճարելու պարտավորություն և կնքված պայմանագրի շրջանակներում վերջինիս կողմից դուրս գրվի առանց ԱԱՀ-ի վճարման հաշիվ-ապրանքագրեր, ապա ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից չի հաստատվի նման հաշիվ-ապրանքագրերը:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ներկայացրել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.01.2018թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար անասնաբուժության մեջ կիրառվող պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն:

2. «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) (22 000 000 ՀՀ դրամ) և ԱԱՀ (4 400 000 ՀՀ դրամ) բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 26 400 000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.7.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի 23.01.2018թ. բողոքը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 29.01.2018թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/743-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ ***նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:***

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ***

որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1317-Ն որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» որոշման թիվ 3 հավելվածի 1-ին կետը սահմանում է, որ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի՝ ավելացված արժեքի հարկից ազատվում են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություն-ներում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:

Նույն որոշման թիվ 3 հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ բժշկական տեխնիկա են համարվում դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորում: Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին դասվող բժշկական տեխնիկան:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար անասնաբուժության մեջ կիրառվող պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով գնային առաջարկը ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) (22 000 000 ՀՀ դրամ) և ԱԱՀ (4 400 000 ՀՀ դրամ) բաղադրիչներից բաղկացած: Մասնակիցը գնային առաջարկի մեջ առանձին տողով նախատեսել է նաև պետական բյուջե վճարվելիք

ավելացված արժեքի հարկի գումարը, մինչդեռ ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1317-Ն որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնման առարկան ազատված է ԱԱՀ-ից:

Միևնույն ժամանակ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Միևնույն ժամանակ նույն կետի համաձայն՝ ***մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առանձին տողով ԱԱՀ-ի գումար նախատեսելը՝ տվյալ գործարքի գծով ԱԱՀ վճարելու պարտավորության բացակայության պայմաններում, չի կարող դիտարկվել որպես վերջինիս հայտը մերժելու հիմք, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց ԱԱՀ-ի հարկի գումարի հաշվարկման, այն է՝ արժեքով (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը), ինչը և իրականացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:***

Դրա հետ մեկտեղ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված գնային առաջարկների արժեքով (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) գնահատման արդյունքում «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ վերջինիս ներկայացրած գնային առաջարկի մեջ նշված արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) նվազագույնն է եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկի մեջ ԱԱՀ-ի գումարի նախատեսումը չի հանգեցնում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սկզբունքների խախտման և անհավասար պայմաններ չի ստեղծում այլ մասնակիցների համար:

Այլ հարց է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 19-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ հարկային հաշիվներ դուրս չեն գրվում այն ապրանքների և ծառայությունների համար, որոնք օրենքով ազատված են ԱԱՀ-ից:

Նույն օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 19-րդ հոդվածի պահանջները խախտելու և հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում անձինք պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը սահմանված ընդհանուր կարգով վճարել բյուջե:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար գնահատելով «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի գնային առաջարկը, գործել է իրավաչափ, ուստի Խորհուրդը գտնում է, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 23.01.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**